ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա նախագծերի ընդունման ազդեցության կապակցությամբ հայտնում ենք հետևյալը:

Պետական տուրքի առկայությունը հանգեցնում է ռոյալթիի և շահութահարկի հարկման բազաների նվազման: Հետևաբար, հաշվի առնելով այն, որ պետական տուրքի տեսքով հավաքագրվող բյուջետային եկամուտները տարեկան կտրվածքով գնահատվել են շուրջ 50 մլրդ. դրամ՝ ռոյալթիի և շահութահարկի գումարների նվազումը կկազմի համապատասխանաբար շուրջ 6 և 9 մլրդ դրամ: Արդյունքում, պետական տուրքի առկայության պարագայում պետական բյուջեի եկամուտների վրա տարեկան զուտ ազդեցությունը կազմում է շուրջ 35 մլրդ. դրամ:

Միաժամանակ, ռոյալթիի համակարգի վերանայման արդյունքում ռոյալթիի գծով պետական բյուջեի եկամուտները կավելանան շուրջ 20 մլրդ. դրամով, իսկ դրա հետևանքով շահութահարկի գծով եկամուտները կնվազեն շուրջ 3.5 մլրդ դրամով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռոյալթիի նշյալ գումարի չափով կնվազի շահութահարկով հարկման բազան:

Արդյունքում, նախագծերի ընդունման հետևանքով պետական բյուջեի եկամուտների՝

ա) ավելացումը կկազմի շուրջ 35 մլրդ դրամ (6 մլրդ դրամ ռոյալթի, 9 մլրդ դրամ շահութահարկ և 20 մլրդ դրամ նոր ռոյալթի),

բ. նվազեցումը կկազմի շուրջ 53. 5 մլրդ դրամ (50 մլրդ. դրամ պետական տուրք, 3. 5 մլրդ. դրամ շահութահարկ)[1]:

Միաժամանակ, հայտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացում չի նախատեսվում:

[1] Ռոյալթիի գծով պետական բյուջեի լրացուցիչ եկամուտների գնահատականները տրվել են մետաղների 2021 թվականի միջազգային գների հիման վրա: